Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2023 թվականի ապրիլի 18-ի N 6 - 6 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Դ. Ռ. Գալոյան
18 ապրիլի 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) միջազգայնացման քաղաքականությունը ռազմավարական պլանավորման փաստաթուղթ է, որը սահմանում է համալսարանի միջազգայնացման առաջնահերթությունները, նպատակներն ու խնդիրները երկարաժամկետ հեռանկարում:

Քաղաքականությունը հիմնված է համալսարանի 2023-2027 թթ. զարգացման ռազմավարության, Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի, Բոլոնյան համակարգի, Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (EHEA), Փարիզի կոմյունիկեի (Paris Communique), Հայաստանի Հանրապետության և միջազգային իրավական և այլ ակտերի վրա, որոնք սահմանում են բարձրագույն կրթության և գիտության զարգացման համաշխարհային միտումները, ՄԱԿ-ի Կայուն զարգացման

նպատակները, հաշվի են առնում աշխարհի առաջատար բուհերի միջազգայնացման փորձը, ուղղված են համալսարանի՝ որպես գլոբալ կրթական շուկայի մասնակցի, կայուն և դինամիկ զարգացման ապահովմանը:

Համասարանի միջազգայնացման պատմությունը և արդի վիճակը

Համալսարանը մշտապես կարևորել է միջբուհական և միջազգային կապերի զարգացումը, միջազգայնացման դրական ազդեցությունը մասնագիտական վերապատրաստումների, դասավանդման առաջավոր մեթոդների փոխանակման և, ընդհանուր առմամբ, կրթության որակի ապահովման վրա: Կարևորվել է նաև մասնագիտական և ուսանողական շարժունությունը՝ յուրաքանչյուր տարի ընդլայնելով նախորդ տարիներին սկիզբ առած ակտիվ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության և այլ երկրների բուհերի, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների հետ: Միջազգայնացումը դիտարկվել է որպես շարունակական գործընթաց և յուրաքանչյուր տարվա ընթացքում հաստատվել են նոր գործընկերային հարաբերություններ մի շարք համալսարանների հետ:

Համալսարանը խրախուսում է նաև անհատական մակարդակում միջազգային կապերի հաստատումը՝ ողջունելով մասնագիտական ցանցերին ակադեմիական կազմի ներկայացուցիչների անդամակցությունը: Ընդհանուր առմամբ, համալսարանի միջազգային կապերի հաստատման քաղաքականությունն ունի 2 չափում (dimension). առաջին՝ օտարերկրացի ուսանողներին կրթական ծառայությունների մատուցում, և երկրորդ՝ առավել առաջադեմ համալսարանների ցանցին ինտեգրացում և միջազգային լավագույն փորձի փոխառում:

Ներկայում համալսարանը ամրապնդել է իր դիրքերը միջազգային կրթական շուկայում՝ ընդգրկվելով մի շարք համաշխարհային վարկանիշներում՝ QS World University Rankings, THE TIMES Impact Ranking, Webometrics Ranking of World Universities: Բանակցություններ են վարվել նաև U-Multirank World

University Rankings, 4iCU University Web Rankings, Round University Ranking (RUR), Clarivate Analytics և UI GreenMetric վարկանշավորման կազմակերպությունների հետ:

Միջազգայնացումը, ակադեմիական համագործակցությունը, կրթության և հետազոտության գերազանցությունը խթանելու նպատակով համալսարանը ներգրավվել է նաև մի շարք ցանցային համալսարանական կոնսորցիումներում (ԱՊՀ, ԵԱՏՄ), համագործակցություն է հաստատել աշխարհի խոշորագույն մատակարար SAP University Alliances կլաստերի հետ:

Միջազգային շարժունության ծրագրերի ընդլայնմանը զուգահեռ (համասարանի միջազգային շարժունության կարգը հաստատվել է 2022 թ.) էապես ավելացել է համալսարանի կողմից իրականացվող միջազգային դրամաշնորհային ծրագրերը, որոնք ունեն և՛ հետազոտական, և՛ ինստիտուցիոնալ կարողությունների բարելավման, և՛ սոցիալական պատասխանատվության ամրապնդման ուղղվածություն:

Միջազգային խորհրդատու ներկայացուցիչների և կազմակերպությունների հետ բանակցությունների արդյունքում համալսարանին հաջողվել է նաև ներգրավել օտարերկրյա ուսանողներ:

Միջազգայնացումը որպես համալսարանի կայուն զարգացման գործոն

Միջազգայնացման ընդլայնումը և միջազգային մրցունակության բարձրացումը համալսարանի զարգացման առաջնահերթ ուղղություններից են: Գլոբալիզացիայի, թվային փոխակերպման և բաց գիտության ժամանակակից պայմաններում համալսարանը պետք է նպաստի ուսանողների մոտ քննադատական մտածողության զարգացմանը, բարդ և ժամանակակից աշխարհից եկող տեղեկատվությունը վերլուծելու կարողությանը՝ հնարավորություն ընձեռելով դերակատար դառնալու գլոբալ գործընթացներում ու դիմակայելու մարտահրավերներին և մրցակցությանը: Համալսարանը ձգտելու է քայլել համաշխարհային հանրության հետ համընթաց՝ զարգացնելով իր

կրթական ծառայությունները, գիտական և նորարարական հարթակները, ապահովելով որակյալ կրթություն և գիտություն բոլոր շահառուների համար՝ անկախ ազգային, ռասայական, մշակութային և կրոնական տարբերություններից:

Վերոնշյալ նպատակների իրականացման համար համալսարանի միջազգայնացման քաղաքականության շրջանակներում որդեգրած հիմնական ուղղությունները հետևյալներն են.

1. Կրթության միջազգայնացում

Համալսարանը կշարունակի խթանել ուսանողների, ասպիրանտների և աշխատակիցների միջազգային շարժունությունը, կրթության որակի միջազգային չափորոշիչներին համապատասխան կներդնի օտարերկրյա գործընկերների հետ համատեղ իրականացվող կրթական ծրագրեր, կնպաստի օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը և կընդլայնի իր կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրման պրակտիկան:

Առաջիկա տարիներին համալսարանը կներգրավի ավելի մեծ թվով օտարերկրյա ուսանողներ և դասախոսներ՝ ապահովելով ուսման և աշխատանքի պատշաճ պայմաններ:

2. Գիտության միջազգայնացում

Բաց գիտության խթանումը համարելով առաջնահերթություն՝ համալսարանը որպես միջազգայնացման ուղղություն կորդեգրի գիտական հետազոտությունների լավագույն փորձի կիրառման, դրանց արդյունքների պահպանման, վերարտադրության և գլոբալ մասշտաբով տարածման քաղաքականությունը:

3. Միջազգային համալսարանական համագործակցության զարգացում

Համալսարանի միջազգայնացման քաղաքականությունը ենթադրում է միջազգային հարաբերությունների հավասարակշռված ապակենտրոնացում, բազմամակարդակ միջազգային գործընկերության սկզբունքի իրականացում: Համալսարանը կամրապնդի գիտակրթական կապերը աշխարհի տարբեր երկրների հետ, կձգտի ստեղծել երկարաժամկետ ռազմավարական միջազգային

գործընկերություններ աշխարհի առաջատար համալսարանների և համալսարանական կառույցների հետ:

4. Միջազգային վարկանիշի ամրապնդում

Միջազգային վարկանշավորումը համարելով համալսարանի գրավչության բարձրացման գործոն, միջազգային գործունեությունը ուղղված կլինի համաշխարհային համալսարանական վարկանիշներում համալսարանի դիրքերի ամրապնդմանը, նոր վարկանշային աղյուսակներում ներգրավմանը, միջազգային կրթական շուկայում համալսարանի դիրքավորմանն ու հեղինակության բարձրացմանը:

Համալսարանի միջազգայնացման ռազմավարությունը

Միջազգայնացման խնդիրները

Խնդիր 1. Շարժունության ծրագրերի աշխարհագրության, ձևերի և տևողության բազմազանեցում, օտարերկրացի դասախոսների և մասնագետների ներգրավում մագիստրոսական կրթական ծրագրերում և ակադեմիական կազմի վերապատրաստման գործընթացում:

Խնդիր 2. Ուսանողների և աշխատողների՝ օտար լեզուներով հաղորդակցական հմտությունների շարունակական բարելավման հնարավորությունների ստեղծում:

Խնդիր 3. Միջազգային ծրագրային հավատարմագրում և օտարերկրյա համալսարանների հետ կրկնակի (կամ համատեղ) որակավորումների շնորհում:

Խնդիր 4. Միջազգային վարկանշային աղյուսակներում դիրքի ամրապնդում:

Խնդիր 5. Օտարերկրյա ուսանողների ներգրավման կառուցակարգերի ձևավորում:

Խնդիր 6. Միջազգային կրթական ընկերակցություններին, կոնսորցիումներին և այլ կազմակերպություններին անդամակցում:

Խնդիր 7. Միջազգային դրամաշնորհային մրցույթներին մասնակցության ընդլայնում:

Ենթանպատակները

Ենթանպատակ 1. Պատրաստել միջազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող մրցունակ գիտելիքով և հմտություններով զինված մասնագետներ:

Ենթանպատակ 2. Ավելացնել օտարերկրացի ուսանողների թիվը:

Ենթանպատակ 3. Խթանել ակադեմիական կազմի միջազգային ուղղվածությունը:

Ենթանպատակ 4. Նպաստել բուհի միջազգային «տեսանելիության» ապահովմանը:

Ենթանպատակ 5. Միջազգային գործընկերների հետ համատեղ իրականացնել տարատեսակ ծրագրեր:

Ենթանպատակ 6. Միջոցներ ներգրավել միջազգային դրամաշնորհային հիմնադրամներից:

Ցուցիչները

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ 1. Միջազգային շարժունության ծրագրերի աշխարհագրության ընդլայնման ցուցանիշ, շարժունության ձևերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, շարժունության մասնակից ուսանողների, վարչական և ակադեմիական կազմի շարժընթաց և տեսակարար կշիռ ընդհանուրի մեջ:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 1. 2023-2027 թթ. ընթացքում տարեկան 5 տոկոսով ավելացնել այն միջազգային գործընկեր բուհերի թիվը, որոնց հետ կիրականացվեն շարժունության ծրագրեր՝ նպաստելով նոր ձևաչափերի և ուղղությունների ներդրմանը:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 2. 2023-2027 թթ. տարեկան 5 տոկոսով ավելացնել շարժունության ծրագրերին մասնակցած ակադեմիական կազմի թիվը՝ 2027 թվականի համար որպես թիրախ սահմանելով վերջին 5 տարում շարժունության առնվազն մեկ ծրագրի մասնակցած ակադեմիական կազմի 20 տոկոս տեսակարար կշիռը հիմնական ակադեմիական կազմում:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 3. Մինչև 2027 թվականը առնվազն 5 մագիստրոսական կրթական ծրագրերում ապահովել 2-ական օտարերկրացի դասախոսի մասնակցություն:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 4. 2023-2027 թթ. ընթացքում տարեկան 5 տոկոսով ավելացնել շարժունության ծրագրերին մասնակցող վարչական կազմի թիվը՝ 2027 թվականի համար որպես թիրախ սահմանելով վերջին 5 տարում շարժունության առնվազն մեկ ծրագրի մասնակցած վարչական կազմի 20 տոկոս տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 5. 2023-2027 թթ. ընթացքում տարեկան 5 տոկոսով ավելացնել ինչպես փոխանակման ծրագրերի, այնպես էլ հեղինակավոր միջազգային միջոցառումների ու ծրագրերի մասնակից ուսանողների թիվը:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ 2. Անգլերենի իմացության B-2 և բարձր մակարդակ ունեցող ուսանողների, վարչական և ակադեմիական կազմի ներկայացուցիչների տեսակարար կշիռն ընդհանուրում:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 1. 2027 թվականին հիմնական ակադեմիական և վարչական կազմում անգլերենի իմացության B-2 և ավելի բարձր մակարդակ ապահովողների տեսակարար կշիռը սահմանել 30 տոկոս:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 2. 2027 թվականին անգլերենի իմացության B-2 և բարձր մակարդակ ապահովող ուսանողների համար տեսակարար կշիռը սահմանել 40 տոկոս:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ 3. Կրկնակի աստիճանաշնորհմամբ և միջազգային հավատարմագրում ունեցող համատեղ մագիստրոսական կրթական ծրագրերի թիվը:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 1. Մինչև 2025 թվականը միջազգային գործընկերների հետ իրականացվող առնվազն 2 ՄԿԾ-ով կազմակերպել ընդունելություն և 2027 թվականին շնորհել կրկնակի (կամ համատեղ) դիպլոմ 2 մագիստրոսական ՄԿԾ-ով:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 2. Մինչև 2026 թվականը միջազգային գործընկերոջ հետ իրականացվող առնվազն մեկ մագիստրոսական կրթական ծրագրով անցնել հավատարմագրում՝ միջազգային հեղինակավոր կամ արտերկրի ազգային հավատարմագրող կառույցի կողմից:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ 4. Միջազգային վարկանշային աղյուսակներում համալսարանի վարկանիշը և դրա փոփոխության շարժընթացը:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 1. 2023-2027 թթ. միջազգային վարկանշային աղյուսակներում կայունացնել համալսարանի դիրքը՝ որպես թիրախ սահմանելով դրա շարունակական բարելավումը և վարկանշային նոր աղյուսակներում ընդգրկվելը:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 2. 2023-2027 թթ. միջազգային վարկանշային աղյուսակներում կայունացնել համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի դիրքը՝ որպես թիրախ սահմանելով առաջընթացն աշխարհի 100 համալսարանական ուղեղային կենտրոնների (Think-Tank) ցանկում:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ 5. Միջազգային ուսանողների թիվը, ներգրավման շարժընթացն ու տեսակարար կշիռը համապատասխան մասնագիտությունների առկա ուսուցման ուսանողների թվում:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 1. 2023-2027 թթ. տարեկան 10 տոկոսով ավելացնել օտարերկրյա ուսանողների թիվը՝ որպես թիրախ սահմանելով 2027 թվականի դրությամբ համապատասխան մասնագիտական

կրթական ծրագրերի առկա կրթաձևում սովորողների 20 տոկոս տեսակարար կշռի ապահովումը:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ 6. Միջազգային գործընկերների հետ իրականացվող ծրագրերի թիվը, դրանց տեսակարար կշիռը բոլոր ծրագրերում, միջազգային հիմնադրամներից ներգրավված միջոցների շարժընթացը, դրանց մասնաբաժինը ներգրավված բոլոր դրամաշնորհային միջոցների ծավալում:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 1. 2023-2027 թթ. ընթացքում տարեկան 10 տոկոսով ավելացնել միջազգային գործընկերների հետ իրականացվող միջոցառումների քանակը:

Առաջընթացի գնահատման ցուցիչ 2. 2023-2027 թթ. ընթացքում տարեկան 15 տոկոսով ավելացնել միջազգային հիմնադրամներից ներգրավվող ֆինանսական միջոցները՝ 2027 թվականի համար որպես թիրախ սահմանելով բոլոր ներգրավված դրամաշնորհային միջոցների ծավալում դրանց 40 տոկոս տեսակարար կշիռը:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգայնացման ռազմավարության իրացման գործողությունների ծրագիրը

2023		2024		2025		2026		2027	
Գործողությունը	**Պատասխանատուն**	**Գործողությունը**	**Պատասխանատուն**	**Գործողությունը**	**Պատասխանատուն**	**Գործողությունը**	**Պատասխանատուն**	**Գործողությունը**	**Պատասխանատուն**
Արտերկրի համալսարանների հետ համատեղ մշակել 2 մագիստրոսական ՄԿԾ և առնվազն մեկի համար դիմել միջազգային ծրագրային հավատարմագրման	Արտաքին կապերի դեպարտամենտ, Արտերկրի գործընկերոջ հետ ՄԿԾ-ն իրականացնող ամբիոններ, Ուսումնական բաժին Որակի բաժին	Կազմակերպել ընդունելություն արտերկրի գործընկերոջ հետ համատեղ իրականացվող մագիստրոսական առնվազն 1 ՄԿԾ-ով	Արտաքին կապերի դեպարտամենտ, Արտերկրի գործընկերոջ հետ ՄԿԾ-ն իրականացնող ամբիոններ, Ուսումնական բաժին	Կազմակերպել ընդունելություն արտերկրի գործընկերոջ հետ համատեղ իրականացվող մագիստրոսական առնվազն 2 ՄԿԾ-ով	Արտաքին կապերի դեպարտամենտ, Ընդունող հանձնաժողով, Արտերկրի գործընկերոջ հետ ՄԿԾ-ն իրականացնող ամբիոններ, Ուսումնական բաժին	Կազմակերպել ընդունելություն արտերկրի գործընկերոջ հետ համատեղ իրականացվող մագիստրոսական 2 ՄԿԾ-ներով	Արտաքին կապերի դեպարտամենտ, Ընդունող հանձնաժողով, Արտերկրի գործընկերոջ հետ ՄԿԾ-ն իրականացնող ամբիոններ, Ուսումնական բաժին	Կազմակերպել ընդունելություն արտերկրի գործընկերոջ հետ համատեղ իրականացվող մագիստրոսական 2 ՄԿԾ-ներով	Արտաքին կապերի դեպարտամենտ, Ընդունող հանձնաժողով, Արտերկրի գործընկերոջ հետ ՄԿԾ-ն իրականացնող ամբիոններ, Ուսումնական բաժին
Գործընկերների հետ մշակել մարքեթինգային արշավի միջոցառումներ	Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել արտերկրի գործընկերոջ հետ իրականացվող ՄԿԾ-ների առաջմղման մարքեթինգային արշավ	Արտաքին կապերի դեպարտամենտ, Ընդունող հանձնաժողով,						
Նոր միջազգային գործընկեր ներգրավելու նպատակով վարել բանակցություններ՝ շարժունության ծրագրերի բազմազանեցման և շարժունության տեղերի ավելացման ուղղությամբ՝ ՌՀԾ-ով սահմանված թիրախային ցուցանիշի ապահովման համար	Արտաքին կապերի դեպարտամենտ	Նոր միջազգային գործընկեր ներգրավելու նպատակով վարել բանակցություններ՝ շարժունության ծրագրերի բազմազանեցման և շարժունության տեղերի ավելացման ուղղությամբ՝ ՌՀԾ-ով սահմանված թիրախային ցուցանիշի ապահովման համար	Արտաքին կապերի դեպարտամենտ	Նոր միջազգային գործընկեր ներգրավելու նպատակով վարել բանակցություններ՝ շարժունության ծրագրերի բազմազանեցման և շարժունության տեղերի ավելացման ուղղությամբ՝ ՌՀԾ-ով սահմանված թիրախային ցուցանիշի ապահովման համար	Արտաքին կապերի դեպարտամենտ	Նոր միջազգային գործընկեր ներգրավելու նպատակով վարել բանակցություններ՝ շարժունության ծրագրերի բազմազանեցման և շարժունության տեղերի ավելացման ուղղությամբ՝ ՌՀԾ-ով սահմանված թիրախային ցուցանիշի ապահովման համար	Արտաքին կապերի դեպարտամենտ	Նոր միջազգային գործընկեր ներգրավելու նպատակով վարել բանակցություններ՝ շարժունության ծրագրերի բազմազանեցման և շարժունության տեղերի ավելացման ուղղությամբ՝ ՌՀԾ-ով սահմանված թիրախային ցուցանիշի ապահովման համար	Արտաքին կապերի դեպարտամենտ
		ՀՊՏՀ ուսանողների համար մշակել և իրականացնել անգլերենի B 2 և բարձր մակարդակ ապահովող օտար լեզվի դասընթաց՝ միջազգայնորեն ճանաչելի որևէ ծրագրի հենքի վրա	Արտաքին կապերի դեպարտամենտ, Լեզուների ամբիոն	ՀՊՏՀ ուսանողների համար իրականացնել անգլերենի B 2 և բարձր մակարդակ ապահովող օտար լեզվի դասընթաց՝ միջազգայնորեն ճանաչելի որևէ ծրագրի հենքի վրա	Արտաքին կապերի դեպարտամենտ, Լեզուների ամբիոն	ՀՊՏՀ ուսանողների համար իրականացնել անգլերենի B 2 և բարձր մակարդակ ապահովող օտար լեզվի դասընթաց՝ միջազգայնորեն ճանաչելի որևէ ծրագրի հենքի վրա	Արտաքին կապերի դեպարտամենտ, Լեզուների ամբիոն	ՀՊՏՀ ուսանողների համար իրականացնել անգլերենի B 2 և բարձր մակարդակ ապահովող օտար լեզվի դասընթաց՝ միջազգայնորեն ճանաչելի որևէ ծրագրի հենքի վրա	Արտաքին կապերի դեպարտամենտ, Լեզուների ամբիոն

		Միջազգային գործընկեր համալսարանների հետ վարել բանակցություններ՝ մագիստրոսական ՄԿԾ-ներում արտերկրից դասախոս ներգրավելու շուրջ	Արտաքին կապերի դեպարտամենտ	Մագիստրոսական ՄԿԾ-ներում ներգրավել արտերկրից դասախոսներ՝ ապահովելով թիրախային ցուցանիշները	Ամբիոններ	Մագիստրոսական ՄԿԾ-ներում ներգրավել արտերկրից դասախոսներ՝ ապահովելով թիրախային ցուցանիշները	Ամբիոններ	Մագիստրոսական ՄԿԾ-ներում ներգրավել արտերկրից դասախոսներ՝ ապահովելով թիրախային ցուցանիշները	Ամբիոններ
Մշակել և հաստատել գնահատմամբ ավարտվող ակադեմիական և մասնագիտական անգլերեն լեզվի մոդուլ բոլոր ամբիոնների համար	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, Որակի ապահովման բաժին, Լեզուների ամբիոն, Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել գնահատմամբ ավարտվող ակադեմիական և մասնագիտական անգլերեն լեզվի մոդուլ բոլոր ամբիոնների համար՝ մոդուլին մասնակցելու նվազագույն շեմ սահմանելով բուհի հիմնական ակադեմիական կազմի ոչ պակաս, քան 25%-ը, մինչև 40 տարեկան դասավանդողների 30%-ը և դասավանդող ասպիրանտների 100%-ը	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, Որակի ապահովման բաժին, Լեզուների ամբիոն, Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել գնահատմամբ ավարտվող ակադեմիական և մասնագիտական անգլերեն լեզվի մոդուլ բոլոր ամբիոնների համար՝ մոդուլին մասնակցելու նվազագույն շեմ սահմանելով բուհի հիմնական ակադեմիական կազմի ոչ պակաս, քան 25%-ը, մինչև 40 տարեկան դասավանդողների 30%-ը և դասավանդող ասպիրանտների 100%-ը	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, Որակի ապահովման բաժին, Լեզուների ամբիոն, Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել գնահատմամբ ավարտվող ակադեմիական և մասնագիտական անգլերեն լեզվի մոդուլ բոլոր ամբիոնների համար՝ մոդուլին մասնակցելու նվազագույն շեմ սահմանելով բուհի հիմնական ակադեմիական կազմի ոչ պակաս. քան 25%-ը, մինչև 40 տարեկան դասավանդողների 30%-ը և դասավանդող ասպիրանտների 100%-ը	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, Որակի ապահովման բաժին, Լեզուների ամբիոն, Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել գնահատմամբ ավարտվող ակադեմիական և մասնագիտական անգլերեն լեզվի մոդուլ բոլոր ամբիոնների համար՝ մոդուլին մասնակցելու նվազագույն շեմ սահմանելով բուհի հիմնական ակադեմիական կազմի ոչ պակաս, քան 25%-ը, մինչև 40 տարեկան դասավանդողների 30%-ը և դասավանդող ասպիրանտների 100%-ը	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, Որակի ապահովման բաժին, Լեզուների ամբիոն, Արտաքին կապերի դեպարտամենտ
Փոփոխել ուսումնական պլաններում ներառված «Ակադեմիական և մասնագիտական օտար լեզու» դասընթացի դասավանդման և գնահատման չափանիշները՝ դրանք համապատասխա-նեցնելով լեզվի իմացության գնահատման միջազգային ճանաչում ունեցող թեստերի չափանիշներին	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, Լեզուների ամբիոն, Գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողով	ՀՊՏՀ վարչական և ակադեմիական կազմի ներկայացուցիչների համար մշակել և իրականացնել անգլերենի B 2 և բարձր մակարդակ ապահովող անգլերեն լեզվի վճարովի և անվճար կարճաժամկետ դասընթաց՝ միջազգայնորեն ճանաչելի որևէ ծրագրի հենքի վրա	Արտաքին կապերի դեպարտամենտ	ՀՊՏՀ վարչական և ակադեմիական կազմի ներկայացուցիչների համար մշակել և իրականացնել անգլերենի B 2 և բարձր մակարդակ ապահովող անգլերեն լեզվի վճարովի և անվճար կարճաժամկետ դասընթաց՝ միջազգայնորեն ճանաչելի որևէ ծրագրի հենքի վրա	Արտաքին կապերի դեպարտամենտ	ՀՊՏՀ վարչական և ակադեմիական կազմի ներկայացուցիչների համար մշակել և իրականացնել անգլերենի B 2 և բարձր մակարդակ ապահովող անգլերեն լեզվի վճարովի և անվճար կարճաժամկետ դասընթաց՝ միջազգայնորեն ճանաչելի որևէ ծրագրի հենքի վրա	Արտաքին կապերի դեպարտամենտ	ՀՊՏՀ վարչական և ակադեմիական կազմի ներկայացուցիչների համար մշակել և իրականացնել անգլերենի B 2 և բարձր մակարդակ ապահովող անգլերեն լեզվի վճարովի և անվճար կարճաժամկետ դասընթաց՝ միջազգայնորեն ճանաչելի որևէ ծրագրի հենքի վրա	Արտաքին կապերի դեպարտամենտ

Մշակել և իրականացնել ՀՊՏՀ շարժունության ծրագրերի իրազեկման թիրախային միջոցառումներ՝ ըստ յուրաքանչյուր ծրագրի	Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել ՀՊՏՀ շարժունության ծրագրերի իրազեկման թիրախային միջոցառումներ՝ ըստ յուրաքանչյուր ծրագրի	Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել ՀՊՏՀ շարժունության ծրագրերի իրազեկման թիրախային միջոցառումներ՝ ըստ յուրաքանչյուր ծրագրի	Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել ՀՊՏՀ շարժունության ծրագրերի իրազեկման թիրախային միջոցառումներ՝ ըստ յուրաքանչյուր ծրագրի	Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել ՀՊՏՀ շարժունության ծրագրերի իրազեկման թիրախային միջոցառումներ՝ ըստ յուրաքանչյուր ծրագրի	Արտաքին կապերի դեպարտամենտ
Իրականացնել ՀՊՏՀ շարժունության, փոխանակման ծրագրերին և միջազգային այլ հեղինակավոր միջոցառումներին մասնակցության արդյունքների տարեկան մոնիթորինգ և դրա արդյունքներով մշակել ճշգրտող միջոցառումներ՝ շարժունության ծրագրերին մասնակցության խրախուսման և ՌԶԾ-ով սահմանված թիրախների ապահովման համար	Արտաքին կապերի դեպարտամենտ			Իրականացնել ՀՊՏՀ շարժունության, փոխանակման ծրագրերին և միջազգային այլ հեղինակավոր միջոցառումներին մասնակցության արդյունքների տարեկան մոնիթորինգ և դրա արդյունքներով մշակել ճշգրտող միջոցառումներ՝ շարժունության ծրագրերին մասնակցության խրախուսման և ՌԶԾ-ով սահմանված թիրախների ապահովման համար	Արտաքին կապերի դեպարտամենտ			Իրականացնել ՀՊՏՀ շարժունության, փոխանակման ծրագրերին և միջազգային այլ հեղինակավոր միջոցառումներին մասնակցության արդյունքների տարեկան մոնիթորինգ և դրա արդյունքներով մշակել ճշգրտող միջոցառումներ՝ շարժունության ծրագրերին մասնակցության խրախուսման և ՌԶԾ-ով սահմանված թիրախների ապահովման համար	Արտաքին կապերի դեպարտամենտ
Իրականացնել միջազգային վարկանիշային աղյուսակների ցուցիչների և դրանց փոփոխությունների մոնիթորինգ և իրականացնել անհրաժեշտ գործողություններ վարկանշավորման նոր աղյուսակներում ՀՊՏՀ ներգրավման և դիրքի առաջխաղացման նպատակով՝ ըստ ՌԶԾ-ով սահմանված թիրախային ցուցանիշների	Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել միջազգային վարկանիշային աղյուսակների ցուցիչների և դրանց փոփոխությունների մոնիթորինգ և իրականացնել անհրաժեշտ գործողություններ վարկանշավորման նոր աղյուսակներում ՀՊՏՀ ներգրավման և դիրքի առաջխաղացման նպատակով՝ ըստ ՌԶԾ-ով սահմանված թիրախային ցուցանիշների	Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել միջազգային վարկանիշային աղյուսակների ցուցիչների և դրանց փոփոխությունների մոնիթորինգ և իրականացնել անհրաժեշտ գործողություններ վարկանշավորման նոր աղյուսակներում ՀՊՏՀ ներգրավման և դիրքի առաջխաղացման նպատակով՝ ըստ ՌԶԾ-ով սահմանված թիրախային ցուցանիշների	Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել միջազգային վարկանիշային աղյուսակների ցուցիչների և դրանց փոփոխությունների մոնիթորինգ և իրականացնել անհրաժեշտ գործողություններ վարկանշավորման նոր աղյուսակներում ՀՊՏՀ ներգրավման և դիրքի առաջխաղացման նպատակով՝ ըստ ՌԶԾ-ով սահմանված թիրախային ցուցանիշների	Արտաքին կապերի դեպարտամենտ	Իրականացնել միջազգային վարկանիշային աղյուսակների ցուցիչների և դրանց փոփոխությունների մոնիթորինգ և իրականացնել անհրաժեշտ գործողություններ վարկանշավորման նոր աղյուսակներում ՀՊՏՀ ներգրավման և դիրքի առաջխաղացման նպատակով՝ ըստ ՌԶԾ-ով սահմանված թիրախային ցուցանիշների	Արտաքին կապերի դեպարտամենտ

ՀՊՏՀ անգլերեն լեզվով իրականացվող ՄԿԾ-ներում օտարերկրացի ուսանողների ներգրավման և ՌԶԾ-ով սահմանված օտարերկրացի ուսանողների թվի աճի թիրախների ապահովման համար միջազգային գործակալների հետ վարել բանակցություններ՝ ըստ ընդունելության ժամանակա-ցույցների	Արտաքին կապերի դեպարտամենտ	ՀՊՏՀ անգլերեն լեզվով իրականացվող ՄԿԾ-ներում օտարերկրացի ուսանողների ներգրավման և ՌԶԾ-ով սահմանված օտարերկրացի ուսանողների թվի աճի թիրախների ապահովման համար միջազգային գործակալների հետ վարել բանակցություններ՝ ըստ ընդունելության ժամանակա-ցույցների	Արտաքին կապերի դեպարտամենտ	ՀՊՏՀ անգլերեն լեզվով իրականացվող ՄԿԾ-ներում օտարերկրացի ուսանողների ներգրավման և ՌԶԾ-ով սահմանված օտարերկրացի ուսանողների թվի աճի թիրախների ապահովման համար միջազգային գործակալների հետ վարել բանակցություններ՝ ըստ ընդունելության ժամանակա-ցույցների	Արտաքին կապերի դեպարտամենտ	ՀՊՏՀ անգլերեն լեզվով իրականացվող ՄԿԾ-ներում օտարերկրացի ուսանողների ներգրավման և ՌԶԾ-ով սահմանված օտարերկրացի ուսանողների թվի աճի թիրախների ապահովման համար միջազգային գործակալների հետ վարել բանակցություններ՝ ըստ ընդունելության ժամանակա-ցույցների	Արտաքին կապերի դեպարտամենտ	ՀՊՏՀ անգլերեն լեզվով իրականացվող ՄԿԾ-ներում օտարերկրացի ուսանողների ներգրավման և ՌԶԾ-ով սահմանված օտարերկրացի ուսանողների թվի աճի թիրախների ապահովման համար միջազգային գործակալների հետ վարել բանակցություններ՝ ըստ ընդունելության ժամանակա-ցույցների	Արտաքին կապերի դեպարտամենտ
Բանակցությունների հիման վրա ընդլայնել օտարերկրացի ուսանողներ ապահովող միջազգային գործակալների թիվը և աշխարհա-գրությունը	Արտաքին կապերի դեպարտամենտ	Բանակցությունների հիման վրա ընդլայնել օտարերկրացի ուսանողներ ապահովող միջազգային գործակալների թիվը և աշխարհա-գրությունը	Արտաքին կապերի դեպարտամենտ	Բանակցությունների հիման վրա ընդլայնել օտարերկրացի ուսանողներ ապահովող միջազգային գործակալների թիվը և աշխարհա-գրությունը	Արտաքին կապերի դեպարտամենտ	Բանակցությունների հիման վրա ընդլայնել օտարերկրացի ուսանողներ ապահովող միջազգային գործակալների թիվը և աշխարհա-գրությունը	Արտաքին կապերի դեպարտամենտ	Բանակցությունների հիման վրա ընդլայնել օտարերկրացի ուսանողներ ապահովող միջազգային գործակալների թիվը և աշխարհա-գրությունը	Արտաքին կապերի դեպարտամենտ
Միջազգային գործընկերների հետ բանակցել, պլանավորել և իրականացնել միջազգային գիտաժողովներ, աշխատաժողովներ, միջազգային կրթական շաբաթներ, ամառային դպրոցներ, սեմինարներ ՀՊՏՀ-ում կամ միջազգային գործընկեր համալսարանում՝ առցանց և անցանց ձևաչափերով	Գիտության գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի դեպարտամենտ	Միջազգային գործընկերների հետ բանակցել, պլանավորել և իրականացնել միջազգային գիտաժողովներ, աշխատաժողովներ, միջազգային կրթական շաբաթներ, ամառային դպրոցներ, սեմինարներ ՀՊՏՀ-ում կամ միջազգային գործընկեր համալսարանում՝ առցանց և անցանց ձևաչափերով	Գիտության գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի դեպարտամենտ	Միջազգային գործընկերների հետ բանակցել, պլանավորել և իրականացնել միջազգային գիտաժողովներ, աշխատաժողովներ, միջազգային կրթական շաբաթներ, ամառային դպրոցներ, սեմինարներ ՀՊՏՀ-ում կամ միջազգային գործընկեր համալսարանում՝ առցանց և անցանց ձևաչափերով	Գիտության գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի դեպարտամենտ	Միջազգային գործընկերների հետ բանակցել, պլանավորել և իրականացնել միջազգային գիտաժողովներ, աշխատաժողովներ, միջազգային կրթական շաբաթներ, ամառային դպրոցներ, սեմինարներ ՀՊՏՀ-ում կամ միջազգային գործընկեր համալսարանում՝ առցանց և անցանց ձևաչափերով	Գիտության գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի դեպարտամենտ	Միջազգային գործընկերների հետ բանակցել, պլանավորել և իրականացնել միջազգային գիտաժողովներ, աշխատաժողովներ, միջազգային կրթական շաբաթներ, ամառային դպրոցներ, սեմինարներ ՀՊՏՀ-ում կամ միջազգային գործընկեր համալսարանում՝ առցանց և անցանց ձևաչափերով	Գիտության գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի դեպարտամենտ